

ԱՅՆ ԱՍՊԵՏ ՏՂԱՆ...

«... Ու կը թերթենք արեւն ինչպէս
Ապրիլ-մեռնիմն առէջ առէջ...»:

Ա. Սեմա (Գեղամ Արմանեան)

Սա վերջալոյսի նըւաղկոտ պահուն,
Ես հանդիպակաց բըլուրի կողին,
Եւ փալիփքուսի հոծ ըստուերներուն
Տակ կը շրջէի յոյզով տրտմագին,
Խորիկելով քերքող տըղու մը մահուան,
«Ապրիլ-մեռնիմն»ի մարգագետնին վրան...:

Ու ծաղիկ մ'աղուոր, աչքի պէս վընիտ,
Կը հարցնէր ինձի — շանչցա՞ր քերքողն այն,
Որ օր մը փալեց ասպետի նըման
Իր գաղափարի լոյսին մէջ անջինջ.
Բայց մահն ահաւոր կտրեց իր քամբան
«Ապրիլ-մեռնիմն»ի ռազմադաշտին վրան...:

Յօշուեցաւ հոգիս վերքով մը խորին՝
Երբ անդրադարձայ իր ծաղիկ կեանքին,
Իր «Զըրահաւոր Գարուն» երգերուն...
Ըստուերներ մորմոխ սրտիս ցանեցին...
Ու հովը մեղմիկ մահերգն հեկեկաց
«Ապրիլ-մեռնիմն»ի դաշտին վրայ կանաչ...:

Այսօր ես դարձեալ կը շրջիմ միմակ
Եւ փալիփքուսի ըստուերներուն տակ,
Ու վշտամոլոր, անձկութեամբ լեցուն՝
Կը խորիկել նորէն այն Ասպետ Տըղուն...
Որ գարնան առտու մ'իմկաւ յեղակարծ
«Ապրիլ-մեռնիմն»ի հրախաղին դիմաց...:

Նայրուպի

ՅՈՎՍԷՓ ԹԵՐԵՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

(Թուական 460-473, Գեղտեմբեր 14)

Գրեց Հ. ՎԱՆԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Վազգէն — Բղէշի Գուգարբի
Շուշանիկ — Դուստր Վարդան Մամիկո-
նեանի եւ Կին Վաղդէնի
Զոյիկ — Եղբայր Վաղդէնի, հիւանդոտ եւ
տկարակազմ
Գայիանէ — Տեսչուհի աղջկանց վարժա-
րանի
Հռիփսիմէ — Փոխ տեսչուհի
Աշխէն
Սիրուշ
Զարուհի
Շողիկ
Փառանձեմ
Մարիամ

Աշակերտուհիներ

Սահականոյշ — Կին Վարդան Մամիկո-
նեանի, մայր Շուշանիկի
Խիկար — Անդարար եւ լրտես Սիւնեաց
Բակուր իշխանին
Սողոմէ — Նաժիշտ եւ մտերիմ Շուշանիկի
Վաչէ — Որդի Շուշանիկի
Օհան — Եպիսկոպոս Յուրտաւ քաղաքին
Վիտիկ մը — Գործակից Վաղդէնի
Պողտան — Դաճապետ Վաղդէնի
Երկու գիւղացիներ — Խօսուհ
Երկու բանտապահներ — Խօսուհ
Երկու քրմուհիներ — Խօսուհ
Զորս պահակներ — Մէկը խօսուհ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻ

Գայիանէ — Տեսչուհի աղջկանց վարժա-
րանի
Հռիփսիմէ — Փոխ տեսչուհի
Սահականոյշ — Կին Վարդան Մամիկոնեա-
նի, մայր Շուշանիկի
Խիկար — Անդարար եւ լրտես Սիւնեաց
Բակուր իշխանի
Աշխէն
Սիրուշ
Զարուհի
Շողիկ
Փառանձեմ
Մարիամ
Երկու գիւղացիներ — Խօսուհ:

Աշակերտուհիներ

Տեսարանը կը ներկայացնէ Տայֆի ան-
տառներուն մէջ աղջիկներու վարժարան
մը. խորքը պալատ մը, աղբեր մաղերով
մուտք. հրապարակ մը, ծառեր: Հանգըս-
տեան ժամանակն է:

Աշակերտուհիները աղնուական ընտա-
նիքներու աղջիկներ են. հազուաժամ են եր-
կար պարեգօտ, մէջքերնին դօտիով սեղ-
մած, մաղերնին երկար, եւ զլուխնին ա-
պարօշով (ժապաւէն) կապած: Ականջնուն
օղեր, վզերնուն մանեակ. գոյնզգոյն հո-
ղաթափներ հազուաժամ: